

«ÉÝ»Éáí ß³ ñ³ 1ñí³ ÍÇó` Ð³ Ì³ èí³ ³ÝÇ Ð³ Ýñ³ ǎ»í ǎóǎÌ³ Ý ı³ é³ ı³ ñáóǎÌáóÝÝ³ ³ÝÝǎ³ ı³ ı³ Ì³ Ñ³ ñ-
Ù³ ñ ı ı³ Ù³ ñáóÙ ³»ñı³ Ì³ óı³ Í ıñ»ÝúÝ»ñÇ ³Ý Ẹ³. Í»ñÇ ÷³ ǎ»ǎÇ ÁÝ¹áóÝáóÙÁ¹ ıñ³ ÁÝ¹áóÝÙ³ ³
աճհրաժեշտության բացակայության պատճառով:

ØÇ³ ǎ³ Ù³ ³³ ı³ Ñ³ Ìı ³ÝáóÙ »Ýú, ǎñ, ³»ñı³ Ì³ óı³ Í ıñ»ÝúÝ»ñÇ ³Ý Ẹ³. Í»ñÇ ÷³ ǎ»ǎÁ Ð³ Ì³ è-
ı³ ³ÝÇ Ð³ Ýñ³ ǎ»í ǎóǎÌ³ ³ ½. ³ ÌÇÝ ǎáÓáı ǎóÙ ıÝÝ³ ñı »ÉÇè, Ñ³ ñ³ ÍÇó ½»ı ǎóóմանք Ñ³ ³¹»è ı. ³ Ð³-
Ì³ èı³ ³ÝÇ Ð³ Ýñ³ ǎ»í ǎóǎÌ³ ³ ıı ǎÝáÙÇı³ ÌÇ ³Ý Ẹ³ ñ³ ñÇ ı »Ó³ ı³ Է Գ³ ԷÝÇı ı³ ı³ Է Ì³ ³ÝÁ:

Ð³ ñ. ³ ³Ýáı`

ı ԷԳıð²Ù Է²ðԳԷÙ²Ù

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆԸ

Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին

ՀՈՂՎԱԾ 1. Հայաստանի Հանրապետության Մաքսային օրենսգրքի (ընդունված է 2000 թվականի հուլիսի 6-ին) 19-րդ հոդվածը լրացնել նոր՝ 1.1 եւ 1.2 մասերով՝ հետեւյալ բովանդակությամբ.

«1.1. Արգելվում է սննդամթերքի արտադրության համար ներմուծել սննդային հումքեր եւ սննդային հավելումներ, ինչպես նաեւ փաթեթավորված պատրաստի սննդային արտադրանք (սննդամթերք), անկախ այն հանգամանքից, թե պիտանիության ժամկետի նշումը ինչ լեզվով է կատարված, որոնց՝

ա) պիտանիության ժամկետը Հայաստանի Հանրապետություն ներմուծվելու պահին անցած է,

բ) ընդհանուր պիտանիության ժամկետից անցել է 2/3-ից ավել ժամկետ,

գ) փաթեթավորման կամ տարայի վրա պիտանիության ժամկետը բացակայում է,

դ) պիտանիության ժամկետի նշումը աղավաղված է,

ե) ժամկետը կրկնակի մակնշված է կամ արտադրողի կողմից նշված բնօրինակ ժամկետը ջնջված է եւ նշված է նոր ժամկետ:

Սույն սահմանափակումները չեն տարածվում արտադրական վերամշակման չենթարկված գյուղատնտեսական մթերքների վրա:

1.2. Արգելվում է սննդամթերքի արտադրության համար ներմուծված սննդային հումքերի եւ սննդային հավելումների, ինչպես նաեւ փաթեթավորված պատրաստի սննդային արտադրանքի (սննդամթերքի) հայերեն լեզվով մակնշումը փակցնել արտադրողի կողմից նշված բնօրինակ պիտանիության ժամկետի վրա:»:

ՀՈՂՎԱԾ 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆԸ

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին

ՀՈՂՎԱԾ 1. «Հայաստանի Հանրապետության Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (ընդունված 1985 թվականի դեկտեմբերի 6-ին) 158-րդ հոդվածի առաջին մասում «Պիտանիության ժամկետն անցած ապրանքներ վաճառելը» բառերը փոխարինել «Առանց պիտանիության ժամկետի, պիտանիության ժամկետն անցած, պիտանիության ժամկետի կրկնակի մակնշմամբ, արտադրողի կողմից նշված բնօրինակ պիտանիության ժամկետը ջնջված եւ նոր ժամկետի նշումով, հայերեն լեզվով մակնշումը արտադրողի կողմից նշված բնօրինակ պիտանիության ժամկետի վրա փակցված ապրանքներ վաճառելը» բառերով:

ՀՈՂՎԱԾ 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆԵԸ

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին

ՀՈՂՎԱԾ 1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքը (ընդունված է 2003 թվականի ապրիլի 18) լրացնել նոր՝ 207.1 հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

«**ՀՈՂՎԱԾ 207.1. ՊԻՏԱՆԻՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆ ԱՆՑԱԾ ԱՊՐԱՆԸ ԻՐԱՑՆԵԼԸ**

1. Առեւտրի կետերի կողմից առանց պիտանիության ժամկետի, պիտանիության ժամկետն անցած, պիտանիության ժամկետի կրկնակի մակնշմամբ, պիտանիության ժամկետի նշումը աղավաղված, արտադրողի կողմից նշված բնօրինակ պիտանիության ժամկետը ջնջված եւ նոր ժամկետի նշումով, հայերեն լեզվով մակնշումը արտադրողի կողմից նշված բնօրինակ պիտանիության ժամկետի վրա փակցված ապրանքներ իրացնելը, եթե դա առաջացրել է մարդու առողջության ծանր կամ որեւէ այլ վնաս,

պատժվում է ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը, որը առաջացրել է մարդու մահ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:»:

ՀՈՂՎԱԾ 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»,
«ՎԱՐՉԱՎԱՆ ԻՐԱՎԱՆԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ՕՐԵՆՍԳՐԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐԵԱՎԱՆ ՕՐԵՆՍԳՐԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆԵՆԵՐԻ ԱՆՀՐԱՃԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Առաջարկվող օրենքների նախագծերի նպատակն է Հայաստանի Հանրապետության Մաքսային օրենսգրքով սահմանված մեխանիզմներով բացառել Հայաստանի Հանրապետություն ժամկետանց, ինչպես նաեւ պիտանիության ժամկետի 1/3-ից պակաս ժամկետով սննդամթերքի եւ սննդային հավելում հանդիսացող ապրանքների ներկրումը:

Օրենքի նախագիծը հնարավորություն կտա պաշտպանել մարդու կյանքն ու առողջությունը, ապահովել արտադրանքի կամ ծառայությունների նկատմամբ սպառողների վստահությունը:

Նախագիծը կերաշխավորի սպառողների կողմից պատշաճ որակի եւ սպառողների կյանքի ու առողջության համար անվտանգ ապրանքների ձեռքբերման, սպառողների շահերի պետական եւ հասարակական պաշտպանության իրավունքները:

Զանի որ սննդամթերքը վերջին հաշվով սպառողին է հասնում առեւտրի կետերի միջոցով, ուստի Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում առաջարկվող փոփոխություններն ու լրացումները նպատակ ունեն վարչական տուգանքներ կիրառելու մեխանիզմներով պաշտպանել ինչպես սպառողների իրավունքները, այնպես էլ բացառել առեւտրի կետերի կողմից պիտանիության ժամկետը սպառված սննդամթերքը արտադրողներից կամ ներմուծողներից ձեռք բերելն ու իրացնելը:

Եթե «ՀՀ Մաքսային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը կբացառի ժամկետանց, ինչպես նաեւ պիտանիության ժամկետի 1/3-ից պակաս ժամկետով սննդամթերքի եւ սննդային հավելում հանդիսացող ապրանքների ներկրումը, ապա առաջարկվող «ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը իր հերթին կապահովի, որպեսզի տեղական շուկայում բացառվեն, ինչպես տեղական արտադրողների կողմից, այնպես էլ ներմուծողների կողմից ժամկետներում ներկրված, սակայն պիտանիության ժամկետը սպառված սննդամթերքի իրացումը: Օրենքի նախագծով՝ առաջարկվող

Վոժոխությունը կերաշխավորի սպառողի՝ սննդամթերքը եւ սննդային հավելումները անվտանգ օգտագործելու իրավունքը:

Հիշյալ նախագծերը քննարկվել են սպառողների իրավունքների պաշտպանության տարբեր հասարակական շահագրգիռ կառույցների հետ եւ արժանացել նրանց հավանությանը: